ՀԿԴ/0307/01/25
(ԵԴ1/4285/01/25)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 դեկտեմբերի 2025 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ՀԿԴ/0307/01/25 (ԵԴ1/4285/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը,

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

**<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.**

1. 2025 թվականի մայիսի 8-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է թիվ 16-0313-24 (ՀԿԴ/0097/01/25) քրեական վարույթը՝

- Լևոն Արմենի Գաբրիելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և 436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով,

- Արմեն Արտաշեսի Գաբրիելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 46-254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 46-254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, 436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով,

- Արտաշես Ռոստոմի Պետրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով,

- Հայկ Հովհաննեսի Համբարյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով,

- Հայկ Սուրենի Խաչատրյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով,

-Վահագն Գևորգի Մկրտչյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով,

- Արսեն Երվանդի Սիմոնյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Տ.Դավթյան) 2025 թվականի մայիսի 12-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի նոյեմբերի 10-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական վարույթից Արսեն Երվանդի Սիմոնյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նոր վարույթ անջատելու մասին, որին շնորհվել է ՀԿԴ/0307/01/25 համարը:

2. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Տ.Դավթյան) 2025 թվականի նոյեմբերի 12-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0307/01/25 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի նոյեմբերի 17-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0307/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Հ.Ավագյան) 2025 թվականի նոյեմբերի 28-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4285/01/25 (ՀԿԴ/0307/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի դեկտեմբերի 1-ին:

**<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>**

5. Արսեն Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա *«(…) Ա.Գ.Վ.-ից տեղեկանալով, որ ***** ****** ********* *_** ******** **_** ***** **_** բնակարանում առկա է շուրջ 100.000 ԱՄՆ դոլար գումար, այն երեք հավասար մասերի բաժանելու նախնական պայմանավորվածության համաձայնությամբ, բնակարան ապօրինի մուտք գործելով ուրիշի առանձնապես խոշոր չափի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2024 թվականի մարտի 27-ի՝ ժամը 15:00-ից մինչև մարտի 30-ի ժամը 15:00-ն ընկած ժամանակահատվածում, խմբի կազմում՝ Ա.Գ.Վ.-ի հետ միասին, մուտեցել են Գ.Գ.Ա.-ին պատկանող՝ ***** ****** ******** *_** ******** **_** ***** **_** բնակարան, առաջին հարկի պատուհանների ճաղավանդակներից բռնվելով բարձրացել են 2-րդ հարկի պատշգամբ, տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել հիշյալ բնակարանի պատուհանը, ապօրինի մուտք են գործել ներս, փնտրել առանձնապես խոշոր չափերի՝ 100.000 ԱՄՆ դոլար գումարը, սակայն, այն չհայտնաբերելուց հետո, հափշտակել են 300.000 ՀՀ դրամ արժողությամբ «Փլեյսթեյշն» մոդելի խաղային սարքը, 500 ՀՀ դրամանոց մետաղադրամներով լցված ապակյա տարրան՝ ընդհանուր 200.000 ՀՀ դրամի, 2 հատ 20 ԱՄՆ դոլար, մոտ 10.000 ՀՀ դրամ, 3 հատ «Burberry», «barakat», «faberlic» տեսակի օծանելիք՝ յուրաքանչյուրը 7.000-8.000 ՀՀ դրամ արժողությամբ, մեկ հատ ճամպրուկ և մեկ հատ կոնյակ: (…)»*[1]:

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 28-29:

5.1. Թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական վարույթով մեղադրյալ Արմեն Գաբրիելյանի նկատմամբ, ի թիվս այլնի, ՀՀ քրեական օրենսգրքի 46-254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա *«(…) տեղեկանալով Երևան քաղաքի Արարատյան 1-ին զանգվածի 12-րդ շենքի 25-րդ բնակարանում շուրջ 100.000 ԱՄՆ դոլար գումարի առկայության մասին, հափշտակված գումարը երեք հավասար մասերի բաժանելու պայմանով, տեղեկություններ տրամադրելու եղանակով օժանդակել է Ա.Գ.Վ.-ին և Արսեն Երվանդի Սիմոնյանին՝ բնակարան ապօրինի մուտք գործելով ուրիշի առանձնապես խոշոր չափի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու հարցում, որից հետո 2024 թվականի մարտի 27-ի՝ ժամը 15:00-ից մինչև մարտի 30-ի ժամը 15:00-ն ընկած ժամանակահատվածում, խմբի կազմում՝ Արսեն Երվանդի Սիմոնյանն ու Ա.Գ.Վ.-ն մուտեցել են Գ.Գ.Ա.-ին պատկանող՝ ***** ****** ******** *_** ******** **_** ***** **_** բնակարան, առաջին հարկի պատուհանների ճաղավանդակներից բռնվելով բարձրացել են 2-րդ հարկի պատշգամբ, տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել հիշյալ բնակարանի պատուհանը, ապօրինի մուտք են գործել ներս, փնտրել առանձնապես խոշոր չափերի՝ 100.000 ԱՄՆ դոլար գումարը, սակայն, այն չհայտնաբերելուց հետո, հափշտակել են 300.000 ՀՀ դրամ արժողությամբ «Փլեյսթեյշն» մոդելի խաղային սարքը, 500 ՀՀ դրամանոց մետաղադրամներով լցված ապակյա տարրան՝ ընդհանուր 200.000 ՀՀ դրամի, 2 հատ 20 ԱՄՆ դոլար, մոտ 10.000 ՀՀ դրամ, 3 հատ «Burberry», «barakat», «faberlic» տեսակի օծանելիք՝ յուրաքանչյուրը 7.000-8.000 ՀՀ դրամ արժողությամբ, մեկ հատ ճամպրուկ և մեկ հատ կոնյակ: (…)»*[2]:

6. Հակակոռուպցիոն դատարանը թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական վարույթից Արսեն Երվանդի Սիմոնյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նոր վարույթ անջատելու մասին որոշմամբ արձանագրել է հետևյալը *«(…) Դատարանը, հետազոտելով քրեական վարույթի նյութերը, լսելով դատական վարույթի մասնակիցների դիրքորոշումները, գտնում է, որ անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական գործից մեղադրյալ Արսեն Երվանդի Սիմոնյանին*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 86-90:

*մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, անջատել նոր վարույթ:*

*(…)*

*Սույն պարագայում թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական գործն իրականացվում է մեկից ավելի անձանց կողմից և մեկից ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու կապակցությամբ:*

*(…)*

*[Հ]արկ է արձանագրել, որ յոթ մեղադրյալներին մեղսագրված են մեկ կամ մի քանի դրվագով ենթադրյալ հանցանքների կատարում, որոնք ուղղված են հանրային ծառայության շահերի և սեփականության դեմ:*

*Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև մեղսագրվող արարքների փաստական և իրավական բովանդակությունը, ծանրության աստիճանը, ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակն ու հետազոտվող ապացույցների ծավալը, ինչը վկայում է սույն վարույթի բարդության և արդեն իսկ առկա ձգձգումների մասին:*

*Այլ կերպ ասած՝ Արսեն Երվանդի Սիմոնյանին մեղսագրվող ենթադրյալ հանցանքի մասով վարույթը մյուս մեղադրյալներին՝ Լևոն Արմենի Գաբրիելյանին, Արմեն Արտաշեսի Գաբրիելյանին, Արտաշես Ռոստոմի Պետրոսյանին, Հայկ Հովհաննեսի Համբարյանին, Հայկ Սուրենի Խաչատրյանին, Վահագն Գևորգի Մկրտչյանին, մեղսագրվող ենթադրյալ հանցանքների հետ համատեղ ընդհանուր կարգով քննելն այն պայմաններում, երբ, ըստ ներկայացված մեղադրանքների՝ հիշյալ դեպքերում մեղադրյալ Արսեն Երվանդի Սիմոնյանին մեղսագրվում է 1 դրվագ հանցագործության կատարում, որը փոխկապակցված չէ մյուս մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների հետ, իսկ դրանք համատեղ քննությունը պահանջելու է տևական ժամանակ և դատավարական ռեսուրսների անհարկի օգտագործում:*

*Նշվածի արդյունքում կարող են խախտվել վարույթի քննության ողջամիտ ժամկետները՝ հանգեցնելով մեղադրյալների արդար դատական քննության իրավունքի խախտմանը:*

*Հետևաբար՝ ենթադրյալ հանցանքներ կատարելու կապակցությամբ իրականացվող թիվ ՀԿԴ/0097/01/25 վարույթից մեղադրյալ Արսեն Երվանդի Սիմոնյանին մեղսագրվող ենթադրյալ հանցանքի մասով նոր վարույթ անջատելու դեպքում, վարույթի քննությունը հնարավոր կլինի ավարտել ողջամիտ ժամկետում, դատավարական միջոցները և ռեսուրսները կօգտագործվեն ռացիոնալ, արդարադատությունը կիրականացվի ավելի արագ և արդյունավետ, ինչն էլ ուղղակիորեն բխում է արդարադատության շահից:*

*Միաժամանակ, հարկ է նկատել, որ նոր վարույթի անջատումը չի կարող անդրադառնալ վարույթի արդարացիության, լրիվության և օբյեկտիվության վրա: Այսինքն՝ գործի անջատումից հետո դատավարության մասնակիցներից որևէ մեկի վերաբերյալ հնարավոր կայացվելիք որոշումը կամ վերջնական դատական ակտը ենթադրաբար չի կարող բացասաբար անդրադառնալ մյուս մասնակցի վրա, քանի որ գործի անջատումը բխում է բոլոր մեղադրյալների իրավաչափ շահերի և օրենսդրորեն նրանց վերապահված հնարավորություններից օգտվելու անհրաժեշտությունից և ողջամտորեն չի կարող սահմանափակել մյուս մեղադրյալների իրավունքները՝ նկատի ունենալով մեղադրյալ Արսեն Սիմոնյանին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրությունը:*

*(…)*

*Արսեն Երվանդի Սիմոնյանին ներկայացված մեղադրանքը փոխկապակցված չէ վարույթով անցնող մյուս մեղադրյալների մեղադրանքների հետ, ուստի թիվ ՀԿԴ/0097/01/25 վարույթից մեղադրյալ Արսեն Երվանդի Սիմոնյանի մասով նոր վարույթի անջատումը չի կարող բացասաբար անդրադառնալ ընդհանուր վարույթի արդարացիության վրա, ավելին՝ բխում է հենց արդարադատության շահից և պայմանավորված է հենց դրանով:*

*Ընդ որում, այս մասով հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ Արսեն Սիմոնյանի մեղադրանքում նշված անձը՝ Ա.Վ.-ն, թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական գործի շրջանակներում մեղադրյալ չի հանդիսանում և վերջինի վերաբերյալ գործ Դատարանի վարույթում չի գտնվում: Այսպիսով՝ հաշվի առնելով, որ նշված վարույթները առանձին քննելու և մեղադրյալներից յուրաքանչյուրի մեղադրանքը դատարանի կողմից հաստատված*

*կամ ապացուցված համարելու կամ հերքվելու դեպքում չեն խախտվի մեղադրյալների իրավունքները, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածը, պաշտպանության իրավունքը և այլն, միաժամանակ չի ստեղծվի նախադատելիություն մյուս գործով, չի վտանգվի գործերը քննող դատավորի անկախությունն ու անկողմնակալությունը, Դատարանը գտնում է, որ ենթադրյալ հանցանքներ կատարելու կապակցությամբ իրականացվող թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական վարույթից Արսեն Երվանդի Սիմոնյանին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, պետք է անջատել նոր վարույթ: (…)»*[3]:

7. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը փաստում է, որ թիվ ՀԿԴ/0307/01/25 քրեական գործն ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա չէ, որպիսի դիրքորոշումը բխում է սույն քրեական գործի փաստական հանգամանքներից:*

*Այսպես՝ թիվ ՀԿԴ/0307/01/25 քրեական գործը քննվում է մեղադրյալ Արսեն Երվանդի Սիմոնյանի կողմից ենթադրաբար ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործություն կատարելու փաստի առթիվ, միաժամանակ՝ թիվ ՀԿԴ/0307/01/25 քրեական գործով այլ մեղադրյալ կամ այլ ենթադրյալ հանցագործության դրվագ առկա չէ:*

*ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված են կոռուպցիոն հանցանքները, որում ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը:*

*Միևնույն ժամանակ, Դատարանն ընդգծում է, որ չնայած այն հանգամանքին, որ նախաքննության ավարտից հետո՝ քրեական գործը դատարան ուղարկելու պահին, թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական գործն ընդդատյա է եղել ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, սակայն 2025 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական գործից մեղադրյալ Արսեն Երվանդի Սիմոնյանին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, անջատվել է նոր վարույթ:*

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 25, թերթեր 73-99:

*Այսինքն՝ քրեական գործի մեղադրական եզրակացությունը հաստատվել և վարույթի նյութերը ՀՀ հակակոռուպցիոն դատարան է հանձնվել այն պատճառով, որ մեղադրյալներից երեքին մեղսագրվում է կոռուպցիոն բնույթի հանցագործության կատարում, մասնավորապես՝ Արտաշես Ռոստոմի Պետրոսյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Լևոն Արմենի Գաբրիելյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Արմեն Արտաշեսի Գաբրիելյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված արարքների կատարում, որոնք նույն օրենսգրքի 6-րդ հավելվածի համաձայն՝ ներառված են կոռուպցիոն հանցագործությունների ցանկում:*

*Ինչպես արդեն իսկ նշվել է 2025 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական վարույթից Արսեն Երվանդի Սիմոնյանին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, անջատվել է նոր վարույթ, հետևաբար՝ Արտաշես Պետրոսյանի, Արմեն Գաբրիելյանի և Լևոն Գաբրիելյանի մասով քրեական գործը քննվում է այլ՝ թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական վարույթում:*

*Արդյունքում՝ Դատարանը փաստում է, որ թիվ ՀԿԴ/0307/01/25 քրեական գործով մեղադրյալ Արսեն Սիմոնյանին մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ենթադրյալ արարքը չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի հանցագործություն, ինչից հետևում է, որ քրեական գործն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:*

*Միևնույն ժամանակ, Դատարանն արձանագրում է, որ պատշաճ ընդդատությունը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարր, ուստի ոչ ոք չի կարող զրկվել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննվելու իրավունքից, որոնց ընդդատությանը կամ իրավասությանն այն վերապահված է օրենքով, ավելին՝ ընդդատության կանոնների խախտումը հանդիսանում է դատական ակտն անվերապահորեն բեկանման հիմք:*

*Հետևաբար՝ հաշվի առնելով այն, որ մեղադրյալ Արսեն Սիմոնյանին մեղսագրվող ենթադրյալ արարքը կոռուպցիոն հանցագործություն չէ, իսկ թիվ*

*ՀԿԴ/0307/01/25 քրեական գործը չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի՝ Դատարանը գտնում է, որ քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:*

*Ընդ որում, Դատարանի դիրքորոշումը բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2025 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ԳԴ/0007/15/23 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից (...)*

*Տվյալ դեպքում հարկ է նկատել, որ թիվ ՀԿԴ/0307/01/25 քրեական գործով դատաքննությունը չի կատարվելու ՀՀ գործող քրեական օրենսգրքի N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթով, այսինքն՝ թիվ ՀԿԴ/0307/01/25 քրեական գործում առկա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը վերապահված որևէ մեղադրանք, իսկ նախաքննության ընթացքում ընդհանուր գործի նաև ենթադրյալ կոռուպցիոն հանցանքի փաստի առթիվ հարուցված լինելու հանգամանքը, ինչպես արձանագրել է ՀՀ վճռաբեկ դատարանը, առարկայական ընդդատության տեսանկյունից որոշիչ նշանակություն չունի:*

*Այսպիսով՝ Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0307/01/25 քրեական գործը պետք է ուղարկել ըստ առարկայական ընդդատության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (...)»*[4]*:*

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 28-ի որոշման համաձայն՝ *«(...) Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով շարադրված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Դատարանն արձանագրում է, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելու հիմք է հանդիսացել Արսեն Սիմոնյանի վերաբերյալ նոր վարույթ անջատելու մասին ՀՀ հակակոռուպցիոն դատարանի որոշումը:*

*Նշված դատական ակտի ուսումնասիրությունից հետևում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել Արսեն Սիմոնյանի վերաբերյալ մեկ մեղադրանքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, նոր վարույթ անջատելու մասին այն դեպքում, երբ նրան վերագրվում է խմբի*

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 26, թերթեր 31-52:

*կազմում՝ Ա.Գ.Վ.-ի հետ նախնական համաձայնությամբ բնակարան ապօրինի մուտք գործելով ուրիշի գույքի հափշտակության կատարում:*

*Արսեն Սիմոնյանի վերաբերյալ նոր վարույթ անջատելուց հետո ՀՀ հակակոռուպցիոն դատարանն արձանագրել է, որ վերջինին վերագրվող արարքը կոռուպցիոն հանցագործություն չէ, հետևաբար քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին և այն ըստ առարկայական ընդդատության ուղարկել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: Ա.Վ.-ի վերաբերյալ վարույթը, հաշվի առնելով այն, որ վերջինին վերագրվում է նաև կոռուպցիոն հանցագործություն, շարունակվում է քննվել ՀՀ հակակոռուպցիոն դատարանում:*

*Այսպիսով, ստեղծվել է իրավիճակ, երբ խմբի կազմում նախնական համաձայնությամբ բնակարան ապօրինի մուտք գործելով ուրիշի գույքի հափշտակության կատարման նույն մեղադրանքով մեկ հանցակցի՝ Արսեն Սիմոնյանի վերաբերյալ վարույթը պետք է քննվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում, իսկ մյուսի՝ Ա.Վ-ի վերաբերյալ վարույթը՝ քննվի ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, ինչը չի բխում արդարադատության շահից և չի կարող համարվել իրավաչափ:*

*Վերոգրյալից բացի հարկ է փաստել, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործից նոր վարույթ անջատելը և միայն այդ հանգամանքով պայմանավորված քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելը, չի կարող ընդունելի համարվել, քանի որ այդպիսի մոտեցումը չի ծառայում արդարադատության շահին և խիստ ձևականացված է:*

*Այդ առնչությամբ պետք է փաստել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը՝ թիվ ԵԴ1/0350/01/24 վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին իր 2024 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ արձանագրել է, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական վարույթից նոր վարույթ անջատելու և դրանով պայմանավորված քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելու վերաբերյալ դատարանի հետևությունն իրավաչափ չէ:*

*Այսպիսով՝ Դատարանը համաձայն չէ Արսեն Սիմոնյանի վերաբերյալ քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկելու մասին վերոգրյալ որոշմանը և*

*հաշվի առնելով արդարադատության շահը, այդ թվում՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունը, գտնում է, որ վարույթը պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարան՝ վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու համար (…)»*[5]:

**<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0307/01/25 (ԵԴ1/4285/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[6]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական*

---

[5] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 26, թերթեր 65-70:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

*դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[7]*:*

12. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[8]:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

*(…)*

*5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:*

*(…)*

*8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների*

---

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[8] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

*նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:*

*9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:*

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը, Արսեն Սիմոնյանի և մյուսների վերաբերյալ քրեական վարույթով 2025 թվականի նոյեմբերի 10-ին որոշում է կայացրել Ա.Սիմոնյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նոր վարույթ անջատելու մասին, որից հետո՝ 2025 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ վերոնշյալ քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, պատճառաբանելով, որ մեղադրյալ Ա.Սիմոնյանին վերագրվող ենթադրյալ հանցանքը կոռուպցիոն բնույթի չէ[9]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստել է, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործից նոր վարույթ անջատելը և միայն այդ հանգամանքով պայմանավորված քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելը, չի կարող ընդունելի համարվել, քանի որ այդպիսի մոտեցումը չի ծառայում արդարադատության շահին և խիստ ձևականացված է:

Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է, որ սույն դեպքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ խմբի կազմում նախնական համաձայնությամբ բնակարան ապօրինի մուտք գործելով ուրիշի գույքի հափշտակության կատարման նույն մեղադրանքով մեկ հանցակցի՝ Ա.Սիմոնյանի վերաբերյալ վարույթը պետք է քննվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում, իսկ մյուս մեղադրյալի՝ Ա.Վ.-ի վերաբերյալ վարույթը պետք է քննվի Հակակոռուպցիոն դատարանում, որպիսի

[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

մոտեցումը, ըստ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի, չի բխում արդարադատության շահից և չի կարող համարվել իրավաչափ[10]:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի մայիսի 12-ին, ընդդատության կանոնների պահպանմամբ, ստանձնել է թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական վարույթը, այնուհետև 2025 թվականի նոյեմբերի 10-ին որոշում է կայացրել մեղադրյալ Արսեն Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նոր վարույթ անջատելու մասին: Դրանից հետո Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի նոյեմբերի 17-ին որոշում է կայացրել Ա.Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ ՀԿԴ/0307/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին, այն դեպքում, երբ թիվ ՀԿԴ/0097/01/25 քրեական վարույթով մեղադրյալ Արմեն Գաբրիելյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից երևում է, որ վերջինիս, ի թիվս այլնի, մեղադրանք է ներկայացվել Ա.Վ.-ին և Արսեն Սիմոնյանին տեղեկություններ տրամադրելու եղանակով բնակարան ապօրինի մուտք գործելով ուրիշի առանձնապես խոշոր չափի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու հարցում օժանդակելու համար: Նման պայմաններում գտնում ենք, որ Հակակոռուպցիոն դատարանի այն դատողությունը, որ Արսեն Սիմոնյանին ներկայացված մեղադրանքը փոխկապակցված չէ վարույթով անցնող մյուս մեղադրյալների մեղադրանքների հետ, ընդունելի չէ:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների փոխկապակցվածության պայմաններում ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործից նոր վարույթ անջատելու և դրանով պայմանավորված թիվ ՀԿԴ/0307/01/25 (ԵԴ1/4285/01/25) քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Երևան

[10] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու վերաբերյալ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն իրավաչափ չէ և չի կարող ծառայել արդարադատության շահին:

17. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ՀԿԴ/0307/01/25 (ԵԴ1/4285/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք**

Արսեն Երվանդի Սիմոնյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ ՀԿԴ/0307/01/25 (ԵԴ1/4285/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

| | | |
|---|---|---|
| **ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ** | **ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ** | **ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ** |